

Բժշկական ծառայությունների մատչելիությունը և սոցիալական հեռավորության պահպանումը COVID համավարակի ընթացքում չեն կարող կանգնեցվել բանտի դարպասներին

Մայիսի 18, 2020

Հեղինակ՝ Մայտե դը Ղյու

Քանի որ բանտերը վատ կենցաղային պայմաններ ունեցող, հաճախ գերբնակեցված վայրեր են, դրանք [COVID-19 կարգի համավարակի ընթացքում վարակի տարածման տեսանկյունից բարձր ռիսկ](#) են ներկայացնում: Մի շարք երկրներ միջոցներ են ձեռնարկել քրեակատարողական հիմնարկների վրա ճնշումը թուլացնելու ուղղությամբ՝ ազատելով ազատագրված անձանց կամ սահմանափակելով ազատագրված վայրեր նոր ընդունվողների թիվը: Անկասկած այս մոտեցումը կարևոր է, հատկապես հաշվի առնելով աշխարհի բազմաթիվ բանտերի գերբնակեցվածության խնդիրը: Մակայն, սա միակ միջոցը չէ, որը պետությունները պետք է նախաձեռնեն առողջապահական ճգնաժամին արձագանքելու համար, քանի որ բազմաթիվ անձինք շարունակելու են մնալ բանտերում: Պետությունները նաև կրում են պարտավորություն ապահովելու ազատագրված անձանց առողջության և կյանքի պաշտպանությունը:

Մասնավորապես ի՞նչ է ենթադրում նման պարտավորությունը համավարակի պայմաններում: Եվրոպայի խորհրդի, մասնավորապես՝ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ), ինչպես նաև ՄԱԿ-ի մշակած նորմերն ու չափանիշները կարող են օգնել պատասխանել այս հարցին և սահմանել հիմնական պարտականությունները, որոնք սահմանում են COVID-19-ից ազատագրված անձանց պաշտպանելու պետության պարտավորությունները:

Ընդհանուր սկզբունքներ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) բազմիցս նշել է, որ արգելանքի տակ գտնվող անձինք առանձնակի խոցելի վիճակում են և Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն իշխանությունները պարտավոր են կազմակերպել նրանց բուժումը ([Կաց և այլոք ընդդեմ Ուկրաինայի վճիռ](#)): Պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն իրենց իրավագործության տակ գտնվող անձանց կյանքը պաշտպանելու ուղղությամբ ([Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի վճիռ](#)):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին պաշտպանել ազատությունից զրկված անձանց ֆիզիկական

բարօրրությունը և, ի թիվս այլ բաների, ապահովել նրանց անհրաժեշտ բուժօգնությունը ([Կուղյան քնդդեմ Լեհաստանի](#)): Ազատագրկվածներին բուժօգնություն պետք է տրամադրվի այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են ազատության մեջ գտնվող հիվանդների բուժման պայմաններին և միաժամանակ հաշվի են առնում ազատագրկվածների հատուկ կարգավիճակը ([բուժապասարկման հավասարության սկզբունքը Մանդելայի կանոնների 24.1 կանոնում](#), որը հաստատվել է ՄԱԿ-ի կողմից): Ի վերջո, ՄԻԵԴ-ը նշել է, որ վարակիչ հիվանդությունների տարածումը բանտային միջավայրում հանրային առողջապահության հիմնախնդիր է ([Կատալին Յուզին Միկու քնդդեմ Ռումինիայի](#)):

Կանխարգելիչ բուժօգնություն

Բանտերում պետք է ձեռնարկվեն կանխարգելիչ միջոցներ: Իրականում, չափազանց կարևոր է հասկանալ, որ բուժապասարկումը բանտերում [չի սահմանափակվում հիվանդություն ունեցող ազատագրկվածների բուժումով](#): «Բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջությունը գնահատելու, խթանելու, պաշտպանելու և բարելավելու» միջոցով բուժճառայության խմբերն ունեն կանխարգելիչ և ակտիվ դերակատարում ([Մանդելայի կանոնների 25-րդ կանոն](#)): Բացի այդ, բուժանձնակազմը պարտավոր է [վերահսկել սանիտարահիգիենիկ պայմանները](#) բանտերում (այդ թվում, օրինակ՝ հագուստի և անկողնային պարագաների մաքրությունը, հիգիենայի պարագաների և հոսող ջրի հասանելիությունը, սանիտարական տեխնիկայի առկայությունը):

COVID-19-ի հետևանքով առաջացած վտանգները հասցեագրելու նպատակով պետությունները պարտավոր են ձեռնարկել միջոցներ, որոնք, բացի հիվանդ ազատագրկվածներին և աշխատակիցներին հայտնաբերելուց և վարակվածներին բուժում ապահովելուց, կնպաստեն վարակի տարածման սահմանափակմանը:

Ի հավելումս, բանտային բուժօգնության ճառայությունը պարտավոր է ազատագրկվածներին և աշխատակիցներին տրամադրել [իր ա գ ե կ ո ղ ա ե ղ ե կ ու թ յ ու լ ն ն ե ր](#) վարակիչ հիվանդությունների մասին, որը կընդգրկի պաշտպանական միջոցների, ախտանիշների և բուժման թեմաները: Աշխատակազմը պետք է անցնի ձեռնարկելիք կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ հատուկ վերապատրաստում: Թեև կանոնները հիմնականում մշակվել են տուբերկուլյոզի, հեպատիտի և ՄԻԱՎ-ի համատեքստում՝ դրանք կիրառելի են նաև COVID-19-ի պարագայում:

Վարակի տարածումը կանխելու նպատակով ամբողջ աշխարհում մարդկանց ցուցված է [կանոնավոր օճառով լվանալ ձեռքերը կամ օգտագործել ձեռքերն ախտահանելու նյութեր](#): Տարածումը տեղի է ունենում, երբ վիրուս պարունակող լորձը կամ կաթիլները՝ աչքերով, քթով կամ կոկորդով ներթափանցում են մարմին, և հաճախ դա տեղի է ունենում ձեռքերի միջոցով: Բանտարկյալները նույնպես պետք է ունենան ձեռքերը

կանոնավոր լվանալու հնարավորություն, իսկ պետությունը պարտավոր է [անձնական մաքրությունը պահպանելու համար](#) բավարար քանակությամբ [հիգիենայի պարագաներ, օրինակ՝ օձառ, և մշտական հոսող ջուր](#), ապահովել բոլոր ազատագրկվածներին ([Մանդեյայի կանոնների 18.1 կանոն](#)): Հետևանքների տեսանկյունից սա իշխանությունների անհապաղ ձեռնարկելիք միջոցառումներից մեկն է, քանի որ բոլոր ազատագրկվածների համար օձառի և ջրի հասանելիության ապահովումը չափազանց կարևոր է բանտերում COVID-19-ի լայն տարածումը կանխելու համար:

COVID-19-ով ախտահարումը կանխելու տեսանկյունից կարևոր կանխարգելիչ միջոց է նաև խցերը մաքուր պահելը, քանի որ վիրուսը կարող է տարբեր մակերեսների վրա գոյատևել մի քանի ժամ: Բանտարկյալները պետք է կարողանան պատշաճ մաքրություն ապահովել իրենց խցերում, իսկ պետությունը, հետևաբար, պարտավոր է բանտարկյալներին ապահովել [մաքրման բավարար նյութերով](#): Բացի այդ, կանոնավոր պարբերականությամբ պետք է լվացվեն [ճածկոցները և սավանները](#):

Կանխարգելիչ բժշկությունը, բնականաբար, հատուկ կարևորություն ունի, երբ խոսքը վերաբերում է վարակիչ հիվանդություններին, ինչպիսին է COVID-19-ը: Բացի սանիտարա-հիգիենիկ միջոցառումների, բանտերում պետք է ակտիվորեն մշակել հատուկ բժշկական մոտեցում: Այսօր առկա է ընդհանուր ընկալում, որ կորոնավիրուսի դեմ պայքարում թեստավորումը կարևոր գործիք է, որը հնարավորություն է տալիս պատշաճ հայտնաբերել և բուժել հիվանդներին, ինչպես նաև կանխել հետագա տարածումը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ վարակվածների մեկ երրորդը չունի ախտանիշեր (ասիմպտոմատիկ է): Համաձայն [WHO](#)-ի. «համայնքում COVID-19-ը վերահսկելու ջանքերը, ամենայն հավանականությամբ, ձախողելու են, եթե բանտերում և ազատագրկման այլ վայրերում չիրականացվեն վարակի կանխարգելման և վերահսկման, պատշաճ թեստավորման, բուժման և խնամքի խիստ միջոցառումներ»: ԽԿԿ-ը բազմիցս շեշտել է [նոր ընդունվող բանտարկյալների բժշկական սրբինինգի](#) կարևորությունը, «մասնավորապես՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով»: Նմանօրինակ սրբինինգը կարող է ընդգրկել վարակիչ հիվանդությունների թեստավորումը: Քննության արժանի է թեստավորման պարտադիր լինելու հարցը: Թեև ցանկացած բուժումից առաջ ազատագրկված անձի համաձայնությունը ստանալը պարտադիր է, սակայն [ԽԿԿ-ն](#) և [ԱՀԿ-ն](#) խրախուսել են նոր ընդունվող ազատագրկվածներից վերցնել տուբերկուլյոզի թեստեր: Հաշվի առնելով դրա փոփոխական բնույթը և ախտանիշերի հնարավոր բացակայությունը՝ նույն կանոնը պետք է կիրառվի COVID-19-ի դեպքում: Կրկին զուգահեռներ անցկացնելով տուբերկուլյոզի հետ, ազատագրկվածների մեծ մասին պետք է հասանելի լինի կանոնավոր թեստավորման հնարավորությունը, իսկ եթե ազատագրկվածի կամ աշխատակցի թեստի արդյունքը դրական է, ապա թեստավորման հնարավորություն առաջարկվի այն ազատագրկվածներին և աշխատակիցներին, ում հետ վերջին երկու շաբաթվա ընթացքում շփումներ են ունեցել վարակված ազատագրկվածները:

Հանրային վայրերում դիմակ կրելը, հատկապես, եթե հնարավոր չէ պահպանել սոցիալական հեռավորությունը, այսօր հանդիսանում է համատարած ընդունված միջոց, որի նպատակն է սահմանափակել COVID-19-ի լայն տարածման վտանգները: Ազատագրված անձանց և աշխատակիցներին պետք է հասանելի լինեն դիմակներ, որոնք նրանք պետք է կրեն այլ անձանց հետ շփվելիս: Սա բուժապասարկման հավասարության սկզբունքի կոնկրետ կիրառում է, որը հաշվի է առնում նաև շփումների սերտությունը, որը բնորոշ է բանտային կյանքին:

Բուժման հասանելիություն

Կենսական նշանակություն ունի դեղորայքի և բուժման հասանելիությունը, իսկ ազատագրված անձանց պետք է հասանելի լինի նույն բուժումը, ինչ հասարակության մյուս անդամներին: Բանտի վարչակազմը պետք է նաև ապահովի որակավորված անձնակազմի կողմից բուժման պատշաճ իրականացումն ու վերահսկողությունը ([Բամուհամադն րնդդեմ Բելգիայի](#)): Եթե ազատագրվածների առողջական վիճակը պահանջում է [տեղափոխել նրանց հիվանդանոց](#), ապա պետք է նրանց փոխադրումը կազմակերպվի արագ և առողջական վիճակից բխող եղանակով ([Ռաֆֆրայ Թադդեին րնդդեմ Ֆրանսիայի](#)):

Այն ազատագրվածներին, ովքեր չունեն դեղորայքի համար վճարելու ֆինանսական միջոցներ, այն պետք է տրամադրվի [անվճար](#): Այս կանոնը պետք է կիրառվի նաև դիմակներով ապահովելուն, քանի որ դրանք կանխարգելիչ բուժօգնության մաս են:

Սոցիալական հեռավորություն

«Սոցիալական հեռավորության» կազմակերպումը բանտերում շատ զգայուն հարց է: Պետք է անդրադառնալ երեք խնդիրների՝ բանտարկյալների համար բնակելի տարածք, աշխատակազմի հետ շփումներ, կարանտինի և մենախցային մեկուսացման միջոցների կիրառում:

Աշխարհում բանտերի մեծ մասում բանտարկյալների համար բավարար կենսական տարածքի ապահովումը կառուցվածքային հիմնախնդիր է, քանի որ գերբնակեցումը բնորոշ է այդ բանտերից շատերին: ԽԿԿ-ն մշակել է դրան առնչվող [նվազագույն չափանիշներ](#), որոնք ավելի են կարևորվում ընթացիկ ճգնաժամի պայմաններում. երկու և ավելի բանտարկյալներով բնակեցված խցերը պետք է 4 մ² բնակելի տարածք ապահովեն յուրաքանչյուր բանտարկյալին և սանհանգույցի հատվածը չի ներառվում այս հաշվարկում: Բազմաբնակիչ խցերի համար ԽԿԿ-ն նույնիսկ սկսել է [խրախուսել «ցանկալի» ավելի բարձր ստանդարտներ](#) (երկու բանտարկյալների համար 10մ², երեքի համար՝ 14մ², չորսի համար՝ 18մ²), քանի որ համարում է, որ 4մ² դեռևս կարող է հանգեցնել նեղվածքի: Սակայն պարզ չէ, արդյո՞ք այս ստանդարտները բավարարում են COVID-19-ի համատեքստում սոցիալական հեռավորության ապահովման պահանջներին: Բացի այդ, ԽԿԿ-ն բազմիցս [քննադատել է ընդհանուր մեծ ննջարանային տարածքներով](#)

[խցերի օգտագործումը](#), քանի որ դրանք անխուսափելիորեն ոչ միայն հանգեցնում են առանձնության բացակայության և ավելացնում ահաբեկման և բռնության վտանգները, այլև կարող են դառնալ բանտում COVID-19 վարակի բռնկման օջախներ: COVID-19-փոխանցումը զսպելու նպատակով բոլոր ազատազրկվածների համար պետք է իրականացվեն [գերբեռնվածությունը նվազեցնելու և բնակչության պայմանները բարելավելու միջոցառումներ](#), ինչպես արվել է տուբերկուլյոզի դեպքում:

Եթե պայմանները թույլ են տալիս, [որոշ երկրներ](#)՝ որպես սոցիալական հեռավորություն ապահովելու միջոց, կիրառել են փաստացի մենախցային մեկուսացում, երբ ազատազրկվածները գրեթե շուրջօրյա փակված են իրենց խցերում կամ կարանտինի մեջ են: Մենախցային մեկուսացման վնասակար ազդեցությունը հոգեկան, ֆիզիկական և սոցիալական առողջության վրա մանրամասն նկարագրել են [ԽԿԿ](#)-ն և [ՄԱԿ-ի մարմինները](#): Բնականաբար կարող է առաջանալ վարակված կամ վարակված լինելու կասկած հարուցող ազատազրկվածի կարանտինի կամ մեկուսացման անհրաժեշտություն: Սակայն մեկուսացումը չպետք է լինի ավելի երկարատև, քան անհրաժեշտ է բժշկական ցուցումներից ելնելով, իսկ բանտարկյալի համար պետք է ապահովել [ամենօրյա իմաստալից մարդկային շփումներ](#): Հաշվի առնելով բանտարկյալների բարեկեցության համար առաջացող վտանգները, պետք է արգելել *դե ֆակտո* մեկուսացման որևէ այլ ձև: Այլ խոսքով, անգամ եթե համավարակի ընթացքում պետք է ժամանակավորապես կասեցնել կենսական նշանակություն չունեցող գործունեությունը, [բանտարկյալներին պետք է ամեն օր ապահովել](#) առնվազ մեկ ժամյա զբոսանք, մարդկանց հետ շփումներ, իսկ ընտանիքի տեսակցությունների կասեցումը պետք է պատշաճ կերպով փոխարինվի հաղորդակցության այլ միջոցների ավելի մեծ հասանելիության միջոցով:

Վերջապես, բարդ հարց է փոխգործակցությունը ազատազրկվածների և աշխատակազմի ներկայացուցիչների միջև: Դրական փոխհարաբերությունները քրեակատարողական հիմնարկի անձնակազմի և ազատազրկված անձանց միջև կարևոր են առօրյա կյանքում և դրանք նպաստում են բանտի ներսում հսկողության և անվտանգության բարելավմանը: Համավարակի պայմաններում անձնակազմի և ազատազրկվածների միջև պետք է հնարավորինս պահպանել ֆիզիկական հեռավորություն: Մա առանձնակի կարևոր է մերկացմամբ ուղեկցվող անձնական խուզարկության ընթացքում, որը ենթադրում է սերտ շփում ազատազրկվածի և աշխատակիցների միջև: Չափազանց կարևոր է, որ մերկացմամբ ուղեկցվող անձնական խուզարկությունները կատարվեն [միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում](#) և [անհատական ռիսկերի գնահատումից հետո](#)՝ հաշվի առնելով դրանց ազդեցիվ և հնարավոր նվաստացնող բնույթը: COVID-19-ի առաջացրած վարակման վտանգները պետք է ստիպեն իշխանություններին կիրառել այս վաղեմի ստանդարտները: Եթե անհրաժեշտ է իրականացնել մերկացմամբ ուղեկցվող անձնական խուզարկություն, ապա անխուս պետք է կիրառվեն կանխագելիչ բոլոր միջոցները. նախապես պետք է լվանալ ձեռքերը և բոլորը պետք է կրեն դիմակ:

Թափանցիկության նոր ձևերի անհրաժեշտություն

Բազմաթիվ երկրներում իշխանությունների կիրառած մեկուսացման կանոնները և սահմանների փակումը թույլ չեն տալիս մշտադիտարկման մարմիններին՝ Կանխարգելման ազգային մեխանիզմներին (ԿԱՄ-եր), Խոշտանգումների կանխարգելման կոմիտեին (ԽԿԿ) և Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի (ԽԿԵ) իրականացնել իրենց պարտականությունները: Ստուգումներն ու մշտադիտարկման այցերն առանցքային դերակատարում ունեն ազատագրկման վայրերում խոշտանգումները և վատ վերաբերմունքը կանխարգելելու հարցում: [Համաձայն ԽԿԿ-ի՝](#) անկախ համավարակից «պետությունները պետք է շարունակեն ապահովել մշտադիտարկման մարմինների մուտքն ազատագրկման բոլոր վայրեր, այդ թվում՝ մարդկանց կարանտինի մեջ պահելու վայրեր»: [ԽԿԵ-ն նույնպես խրախուսել](#) են ԿԱՄ-երին շարունակել իրենց տեսչական առաքելությունների իրականացումը: Սակայն, թե՛ ԽԿԿ-ն, թե՛ ԽԿԵ-ն կոչ են արել մշտադիտարկման մարմիններին ձեռնարկել կանխարգելիչ բոլոր միջոցները և պահպանել «մի՛ վնասիր» սկզբունքը:

Հաշվի առնելով գործնական դժվարությունները, որոնց հետ այցերի ընթացքում առնչվում են մշտադիտարկման մարմինները, պետությունները պետք է թափանցիկություն ապահովելու լրացուցիչ պարտականություն ստանձնեն անազատության մեջ գտնվողների, նրանց ընտանիքների և հասարակության առջև: Նման բախտորոշ ժամանակաշրջանում բանտերը չեն կարող լինել անթափանց աշխարհ: Թափանցիկության այս ընդլայնված պարտականության սահմանումը դուրս է այս փաստաթղթի շրջանակից: Սակայն, երբ այն կիրառվում է վարակման վտանգից ազատագրկվածների կյանքն ու առողջությունը պաշտպանելու պարտականությունից ելնելով, այն՝ որպես հետևանք, պարտավորեցնում է պետություններին կանոնավոր հաղորդել զանազան տվյալներ, օրինակ՝ հայնտնաբերված դեպքերի և մահվան դեպքերի քանակը, ներառյալ՝ աշխատակիցների կազմում: Պետությունները պետք է նաև մանրամասն տեղեկություններ տրամադրեն կանխարգելիչ բժշկության, բուժօգնության և բանտարկյալների ռեժիմի առումով ձեռնարկված միջոցառումների մասին: Նման թափանցիկությունը բխում է բոլորի շահերից՝ սկսած հենց իշխանություններից, որոնք դրանով ցույց կտան իրենց հոգատարությունը հասարակության խոցելի ներկայացուցիչների հանդեպ:

Դատարանը նշել է, որ արդարադատությունը չի կարող կանգնեցվել բանտի դարպասներին ([Քեմպերը և Տելն ընդդեմ Միացյալ Թագավորության](#)): COVID-19-ը կանգ չի առնում բանտի դարպասներին: Ազատագրկման վայրում գտնվող անձինք չունեն այլ տարբերակ, քան դնել հույսն իրենց առողջությունը պաշտպանելու համար իշխանությունների ձեռնարկած միջոցների վրա: Պետությունը չունի այլընտրանք, քանի

որ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները սահմանում են ազատագրկվածների հանդեպ պետության հստակ պարտականությունները: Պետությունը չի կարող չձեռնարկել պատշաճ գործողություններ: Առանց հապաղելու:

Մայտե դը Ղյուն Բաց հասարակության հիմնադրամների Արդարադատության նախաձեռնության ծրագրային պատասխանատուն է և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի նախկին 1-ին փոխնախագահը

Աղբյուրը՝ [Strasbourg Observer](https://strasbourgobservers.com/2020/05/18/access-to-healthcare-and-social-distance-during-covid-pandemic-cannot-stop-at-the-prison-gate/)

<https://strasbourgobservers.com/2020/05/18/access-to-healthcare-and-social-distance-during-covid-pandemic-cannot-stop-at-the-prison-gate/>